

# ՍԵՎԱԿԸ՝ ՔՆՆԱԴԱՏ

«Ես օրինում եմ նրանց ճանապարհը...»

Սևակ քննադատի աղերսները ռուս քննադատների հետ խորն են և հիմնվում են քննադատության մեջ նրանց առաջ քաշած սկզբունքների և դրույթների վրա: Քննադատելով և շատ հաճախ ֆանատիկ անհանդուրժողի նման մերժելով ժամանակի գրական քննադատության ոչ ճիշտ ոգին, անառողջ միտումները, Պարույր Սևակը դասական քննադատության առողջ և սկզբունքային ոգին պարտադրում է ժամանակի բոլոր քննադատներին և դասական, ժամանակակից պոեզիան արժեքավորելիս առաջնորդվում է ռուս քննադատների կատարած ընդհանրացումներով: Այսպես, օրինակ քննադատներին ապացուցելու համար սեփական մտքերի ամփոփությունը, նա դիմում է հեղափոխական - դեմոկրատ Դոբրոյուբովին... Եթե երկն ունի ինչ – որ բան, ապա ցույց տվեք մեզ, թե ի՞նչ ունի. սա առավել լավ է, քան ընկնել կշռադատությունների ետևից, թե ի՞նչ չկա և ի՞նչ պետք է լինի այնտեղ: Դատաքննությունը քննադատությունից խստիվ տարբերակելով, Սևակը նորից մեջբերում է Դոբրոյուբովի այն խոսքը, որ քննադատը առավել դատապաշտպան է, քան դատավոր: Քննադատության մեջ նա հիմք է ընդունում ռուս մեծագույն բանաստեղծ Պուշկինի կարծիքը՝ վկայակոչելով նրա խոսքերը Նաչուկինին. «Դու ինձ գրում ես ինչ – որ քննադատական ասուլիսի մասին, որ դեռ չեմ կարդացել, եթե դու կարդայիր մեր ամսագրերը, ապա կտեսնեիր, որ այն ամենը, ինչ մեզանում կոչվում է քննադատություն, հավասարապես հիմար է և ծիծաղելի, ես իմովսանման ձեռն եմ քաշել դրանից, լռելոքն առարկել անկարելի է, իսկ հասարակության առաջ խեղկատակելու մտադիր չեմ»:<sup>1</sup>

«Քննադատությունը այլևս հավելված չէ» հոդվածը հայ գրականության քննադատական մտքի համար նույն հոգևոր արժեքն ունեցավ, ինչ համարժեք

<sup>1</sup> Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 277:

էր Վ.Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» և իր մյուս հոդվածներից «Հանուն և ընդդէմը»:

Սևակ քննադատի, Սևակ գեղագետի գրաքննադատական հոդվածներում, նամակներում, հիացմունքով է խոսվում Դոստոևսկու ապշեցնող ռեալիզմի, Դոբրոլյուբովի առաջ քաշած քննադատական առողջ ոգու և սկզբունքային դավանանքի մասին:

Սևակը մոլեգին թշնամի էր գրական առաջընթացը սխալ ուղիով տանողներին և իր «Քննադատությունը այլևս հավելված չէ» հոդվածը հենց այդ գրական միտումն ուներ: Սևակ քննադատը օժտված էր գրականագետի բնատուր ձիրքով, բնագրով, և Սևակ քննադատի մեջ առկա էր գրականագետի զորեղ ներուժ, ինչը օգնում էր նրան առարկայապես արժևորելու գրական երկը:

Պատմական ժամանակաշրջանում պոեզիայի ճշմարտացիությունից, գրականության գնահատման ոչ տեղական չափանիշներից ելնելով՝ Սևակը արժեքավորում է Մայակովսկու, Եսենինի, Ցվետաևայի, Պաստերնակի, Տվորդոսկու, իր ժամանակակից պոետների՝ Վոդսեսենսկու, Վինոկուրովի, Սմելյակովի, Օգենկի ստեղծագործությունները: Քննադատի չափանիշային մոտեցումը՝ պոեզիան իր կռահման ուժի և գրական ճաշակի մեջ գեղագիտական որոշակի կատեգորիաներով արժեքավորելը համարում է առաջնային՝ առաջնորդվելով Չերնիշևսկու այն դրույթով, որ «Քննադատությունը, եթե արժանի է իր անվանը, գրվում է ոչ թե այն բանի համար, որ քննադատին բերի հասարակությանը իր բառախաղերով զվարճացնող ողկիլային կուպլետասացի փառք: Սրամտությունը, կծվությունը, մաղձը, եթե այդ ամենի տերն է քննադատը, պիտի նրան ծառայեն իբրև զենք հասնելու լուրջ նպատակի՝ ընթերցողների մեծամասնության մեջ զարգացնելու և մաքրելու ճաշակ, պիտի նրան միջոց տան համապատասխանաբար արտահայտելու հանրության լավագույն մասի կարծիքները»:<sup>2</sup>

Սևակ քննադատի մասունքները մեծ ճանապարհի գալու մատնանշող պատառիկներ են, որոնք խորն ու ճշմարտացի մեկնաբանումներ են՝ բանասիրական համակարգման արժանի: Քննադատելով պարզունակությունը,

<sup>2</sup> Պ.Սևակ, հ. 5, էջ 281:

պոեզիայում մանրամասնելու թուլությունը, բանաստեղծը միտքը հաստատում է՝ դիմելով Նեկրասովի գրական հայացքների օգնությանը. «Հարկավոր է ուրիշի խելքին և խորաթափանցությանը հավատալ գոնե այնքան, որքան սեփականին: Այդ հավատի պակասը հաճախ գրողին անգիտակցաբար խանգարում է արտահայտվել և ստիպում հետաձգել շատ խորունկ բաներ»: Ղասականի ժառանգության մեջ Սևակը «ընդդեմի» կողմնակիցն է: Կտակառուն միևնույն ժամանակ պետք է պարտավորվի իր սեփական կտակը թողնելու ժողովրդին. «Մենք կտակառուն ենք մի վիթխարի ժառանգության՝ Հոմերոսից մինչև Բլոկ, Մայակովսկի, Չարենց, Էլուար ...»: Սևակ քննադատը չի ժխտում և առաջ է քաշում «նորարարական խնությունը» ժառանգելու խնդիրը: Նա երիտասարդ բանաստեղծների մոտ տեսնում է այդ երկուսի միաձուլման ծայրահեղությունները, որոնք կարող են վտանգավոր լինել գրականության համար: Ուս երիտասարդ բանաստեղծներից նա առանձնացնում է Վինոկուրովին՝ հայտարարելով. «Նա իմ բանաստեղծն է, հոգով իմը, խոստանալով, որ դեռ պետք է վերադառնա նրան»: Եվ իրոք, նամակագրության մեջ նույն Վինոկուրովի բանաստեղծության մասին նա գրում է. « Ես արդեն խոսեցի Վինոկուրովի մի բանաստեղծության մասին, որը նույնիսկ սիմֆոնիզմի տարր չունի: Բայց վերջին տարիներին նրա բանաստեղծություններից շատերը ընթերցողին ուրախություն պատճառեցին հենց դրանով»: Տաս – տասնհինգ տողանոց այդ բանաստեղծություններից անհամեմատ ավելի բան է հասկացվում, քան ասում են բառերը, որովհետև նրանց հեղինակը խոսում է՝ կամ իր ամենամերձավորի հետ, և դրանով իսկ փակում ամեն ինչ բացատրելու, մանրամասնելու այլև անբանուկ ճանապարհը, ինչպես և ապացուցում, որ սիմֆոնիստական մտածողությունը բնավ էլ չի հավասարվում կտավի խոշորությանը»:<sup>3</sup>

Քննադատ Սևակը երբեք չի ծանծրացնում իր չորության, դատողությունների պարտադրող կեցվածքով, նույնիսկ քննադատությանն է խառնում գեղարվեստը, համադրումների և գրական զուգահեռների մեջ մնալով հարազատ ինքն իրեն: Սիա մի հիասքանչ կտոր, տարողունակ, որպես գրականագետի քննադատի խոհ, նույնքան գրավիչ ու համոզիչ, որպես բանասերի

<sup>3</sup> Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 144:

եզրակացություն և խոսուն իր ներկայանալի համադրումներով: «Բայց հոմանիշային նրա բառարանն ունի մի այնպիսի հարստություն, որի հաշվետարն են դարձել մինչև անգամ օտարները՝ Վ.Բրյուսովը իբրև օրինակ հենց այդ էր անում, երբ Սայաթ – Նովայի խաղերում գտնում էր ապշեցուցիչ «բազմազանություն միանմանության մեջ» և նրանց հեղինակին համարելով հանճար՝ իրավամբ կոչում է «երանգների բանաստեղծ», այն երանգների, որոնց պահանջատերը ու վճարողը պիտի աշխարհ գար Սայաթ – Նովայից 100 տարի հետո, ու կոչվեր Վերլեն: Միևնույն ժամանակ իր ընթերցողին համոզում է այլոց կարծիքների մեջ, պարզեցնելով և ընդգծելով իր բանասերի կեցվածքը. այս կամ այն մտքին համամիտ լինելը, որն ավելի է հարստացնում նրա դատողությունների ճշմարտացիությունը. «Այդ երանգների բազմազանությունը, զգացմունքային այդ հոմանիշների անսպառ հարստությունը, մեղեդիական միևնույն թեման անսահմանորեն փոփոխվելու կարողությունից զգում ես գլխապտույտ, որ ծանոթ, շատ ծանոթ է Սայաթ – Նովայի ազգակիցներին, որովհետև Սայաթ – Նովային այս առումով ամենից ավելի հիշեցնող բանաստեղծն էլ գրել է հայերեն և կոչվում է Նարեկացի»:<sup>4</sup>

Դեռևս «Սայաթ – Նովա» մենագրության մեջ գրում է. «Եվ ամեն ժամանակաշրջան ունի կոնկրետ միայն իրեն հատուկ հարկադրանքներ ու պահանջներ, կաշկանդանքներ ու արգելքներ, և վերջապես ճաշակ ու ախորժակ, որոնք ճիշտ է անցողիկ, գնայուն են (որովհետև մասնահատություն են միայն տվյալ ժամանակաշրջանի և պիտի չփոխանցվեն հետագային), սակայն պարտադիր են այդ ժամանակաշրջանում»: Եվ ապագա սերունդների համար մեծ են մնում այն բանաստեղծները միայն, ովքեր ավելի քիչ են հիմնվում այդ անցողիկ – գնայունի վրա, այսինքն այն մասնահատությունների վրա, որոնք տվյալ ժամանակաշրջանին են ու չեն լինելու ապագայում: Հավատարիմ ինքն իրեն, ազնիվ, սկզբունքային քննադատը նույնիսկ Սայաթ – Նովայի մեծության մասին խոսելիս անդամաճան է մնում քննադատի իր կոչմանը, նրա ոճական որոշ առանձնահատկություններ արժևորելիս գրում է. «Համեմատություններ,

<sup>4</sup> Պ. Սևակ, Սայաթ – Նովա. մենագրություն, էջ 291, կամ հ. 3:

մակդիրներ ու պատկերներ, որոնք կերտված են թանկ նյութից, բայց մաշված են վաղուց, պերճ են, բայց փոշոտված»:

Պարույր Սևակի քննադատությունը ներծծված է փիլիսոփայությամբ, տրամաբանական ֆորմուլներով, որոնք խարսխվում են լուրջ հայեցակետերի վրա: Քննադատական իր հողվածներում մինչև վերջ անկեղծամալով՝ Սևակը կարողանում է արտահայտել իր ջերմ սերը և ատելությունը: Հիշենք Գերցենի խոսքերը քննադատ Բելինսկու մասին: Իր քննադատական, կրքոտ միջամտությամբ նա մոտ է Բելինսկի քննադատին:

Սևակի ժամանակակիցները վկայում են նրա բանավոր խոսքը. նա նման էր Բելինսկի քննադատին, խոսում էր ահեղ ոգևորությամբ. լուրջ խոսքերը սպանիչ, ահեղ խայթերով համեմեկով: Բելինսկու նման Սևակին ևս հատուկ էր «Տողը» բացելու արվեստը, տողից դեպի ենթատեքստը, տեքստը. ստեղծագործության ամբողջ գաղափարաբանությունը բացահայտելու յուրահատուկ տողանց ուներ Սևակը: Ցանկացած հեղինակի բնութագրելիս որքան ճշգրտորեն է նա կարողանում տողից գնալ թեմա և գաղափարը արժևորելով տվյալ ստեղծագործության համար ընտրած տողի ներկայությունը և ... նման բացահայտումներով է լեցուն ամբողջ Սայաթ – Նովա մենագրությունը:

Չադակի հայտնի մամակի մասին խոսելիս, Գերցենը գրում է. «Ամեն մեկը զգում էր ճնշում, ամեն մեկի սրտին ինչ որ բան կար, և այնուամենայնիվ ամենքը լռում էին, վերջապես եկավ մի մարդ, որը յուր ձևով ասաց ինչը». «Ռուսաստանը ցնցող այդ կշտամբանքի անողորմ աղաղակը, երկար, թուլացած ու գազազած տանջանքի ճիչը»:<sup>5</sup>

Ահա այս «ինչի» մասին է Սևակի խոսքը: Գրողը պետք յուր ձևի ասի «ինչը»՝ ապահովելով գրական ընթացքի համար այնքան կարևորագույն «ինչպեսը»՝ հաստատելով իր ասելիքը գրականության մեջ: Ասելիքի պակասից չպետք է տուժի գրականությունը և գրական երկն էլ պակասավոր լինի. «Թող գրեն անհանգ, թող գրեն առանց չափի և առանց կշռույթի, թող գրեն առանց մեծատառերի և առանց կետադրության, ում խելքին ինչպես բրդում է, միայն մեկ պայմանով. թող բան ասեն, և այդ բանը լինի թարմ և չլինի չնչին»:

<sup>5</sup> Ա. Գերցեն, Փիլիսոփայական երկեր, էջ 261:



«Հանուն և ընդդեմ նախահիմքերի» հոդվածը նույն պայթյունավտանգ դերն ունեցավ:

Սևակ քննադատը տողից գնում է դեպի պոեզիայի տվյալ բանաստեղծի ինքնատիպության բացահայտման: Հետաքրքիր դիտարկումներ ունի Սևակ քննադատը գրողի ինքնատիպության մասին. «Ինչի և ինչպիսի ներդաշնակության մեջ»: Իր այս հոդվածում Սևակը խոսելով դասականների «ինչպես» - ի մասին, գրում է. «Ինչպես տեսնում եք, ոչ՝ Սոկրատեսի, ոչ՝ Բալզակի, ոչ՝ էլ Տոլստոյի և Դոստոևսկու «ինչպես» - ը այսօր մեզ բնավ չի բավարարում: Բայց, այսօր մարդկության մեծագույն վեպերի հեղինակները նրանք են: Եվ այստեղ ուրիշ գաղտնիք չկա, բացի «Ինչ» - ի գաղտնիքից»: Գրականության պատմությունը «ինչպեսի զարգացման, արտահայտչական մոր ձևերի ու եղանակների փոփոխության պատմությունն է», մոր ձևեր և մոր եղանակներ փոփոխվում են այն նպատակով միայն, որպեսզի բան ասեն ավելի թարմ և ավելի խոր...

Ինքնատիպ կարող է լինել այն բանաստեղծը, որ իր մոր ասելիքը արտահայտում է մոր ձևով: «Ընդդեմ և հանուն ռեալիզմի նախահիմքերի» բանավիճային հոդվածում գրված 1960 – 66 (Գրական թերթ) կարևորում է XX դարի համար բանաստեղծության «հույզը» և տարակարծիք մնալով իր պոեզիայի այն քննադատների հետ, ովքեր իբրև Սևակ բանաստեղծին համարում են բանական - դատողական – ռացիոնալ – ինտելեկտուալ բանաստեղծ: Ժխտելով նրանց, Սևակը գրում է. «Ես ինձ շատ ավելի հուզական, զգացմունքային բանաստեղծ եմ համարում, քան իմ այն բանաստեղծ ընդդիմախոսները, որոնք երգվում են հույզի ու զգացմունքի անունով»:

Կարդում և որքան խորն են ուսումնասիրում, այնքան խորապես են համոզվում, որ Սևակ քննադատին շատ մոտ ու հավատարիմ գործել է Սևակ ինքնաքննադատը: Որքան անողոք է եղել հանունի համար նրա ցավը, որ ինքն անգամ իր ընդդեմն էր դառնում հանուն գրականության, հանուն դարերին սնուցող արժեքների: Ահա մի հատված Վ.Հովակիմյանին գրված իր տողերից... «Բայց հիմա արի ու տես, որ ինքն իրեն հետը կյանք չունեցող, ոչ երկարակյաց - անցողիկ, գնայուն բանաստեղծություն է, գնալով ու գնալով ոչ մի հնչեղություն չի ունենա, որովհետև գրված է կոնկրետ վերջի մասին և կոնկրետ

վերջի վերացումից հետո կվերանա նաև այն մատը, որ դրվել է այդ վերջի վրա: Իսկ «միանգամիցը»՝ չէ: Միանգամիցն էլի կապրի, որովհետև նա միայն «այսպեսի» մասին չէ: Մարդկային այս ցանկությունը ոչ հնամալ գիտի, ոչ էլ՝ մեռնել: Եվ այդ ցանկության պարունակիչը ավելի երկարակյաց պիտի լինի...»:

Բանաստեղծական տեսանկյունից նայելով ամեն ինչի, Սևակը այն խորհուրդ է տալիս և ուրիշներին: Նույն հայտնի նամակի մեջ իր գրական «կոնսուլտացիան» շարունակելով գրում է. «Ծիշտ այդպես էլ դու պիտի մեկընդմիշտ հիշես, որ քո ուժը (և ոչ միայն քո, այլև ամեն մի իսկական բանաստեղծի), նրա պատկերավոր մտածելու աշխարհին, իրերին, ամեն ինչի բանաստեղծական տեսանկյունից նայելու մեջ է. «... ամենապրոգայիկ առարկան էլ երբ շրջում, շուռ ես տալիս, դառնում է բանաստեղծություն, ձեռք բերելով և կլորություն, և ջերմություն...»<sup>6</sup>

Նամակի մեջ շարունակվում են բանաստեղծի, քննադատի, Սևակ բանաստեղծի մասին մտքերը հոգեսուզման կարողության, նրա պատկերավոր մտածողության մասին. «Մտածողության իմ եղանակը միայն իմը չէ - դարիսն է, ժամանակինն է, ուստի և մտածողության այդ եղանակը ընդհանուր կդառնա բոլորի համար»:

Ուղենշելով ապագա գրականության գալիք օրը Սևակը պնդում է, որ այդ նույն մտածողության եղանակը կիշխի նոր գրականության մթնոլորտում, դրանով կառաջնորդվեն շատերը և այն կդառնա նորագույն պոեզիայի միակ ուղին, որով կառաջնորդվեն նորերը. «Նոր խոսքերով, նոր երգով»: Կգան նորերը, որոնք կմթոստանան ընդհանուր դարձած այդ մտանդանակի դեմ (այսինքն այսօրվա իմ ասած «անընդունելի» բառերի դեմ) և խոսելով նորի ու արդիականի անունից, կպահանջեն իրենցը... նրանց բերանը կփակեն գուցե և իմ անունով, նրանց գրածները կհամարեն չոր խելոք. «Ինչ ուզում ես ասա, բայց ոչ բանաստեղծություն» - օրիգինալության մարմաջ, և այլև, բայց ճիշտ կլինեն նրանք: Եվ այսօրվանից էլ ես նրանց կողմն եմ կանգնած, ես նրանց հետ եմ, և ես օրհնում եմ նրանց ճանապարհը»:

---

<sup>6</sup> Սով. գրող, Երևան, 1983, հ. 3, էջ 562: